


1.2 Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2003թ. հունվար-մայիսին հանրապետությունում, արդյունաբերական 1821 կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 154850.4 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 155913.9 մլն դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 19971.5 մլն դրամի, այլ երկրներում՝ 33474.2 մլն դրամի արտադրանք:

2002թ. հունվար-մայիսի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 118.2%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 121.0%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2001թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

(%)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2002 թ.			
հունվար	71.7	107.1	71.7
փետրվար	100.9	104.5	72.3
մարտ	116.4	116.9	84.2
մայիս	88.1	115.6	74.2
մայիս	95.2	107.3	70.6
հունիս	103.7	115.8	73.2
հուլիս	114.4	104.6	83.7
օգոստոս	96.0	96.1	80.4
սեպտեմբեր	102.7	116.1	82.6
հոկտեմբեր	108.3	137.4	89.5
նոյեմբեր	94.8	123.7	84.8
դեկտեմբեր	127.1	100.3	107.8
2003 թ.			
հունվար	78.9	109.9	78.9
փետրվար	99.1	105.7	78.2
մարտ	105.5	115.5	82.5
ապրիլ	94.9	126.2	78.3
մայիս	96.4	136.0	75.5


**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն
ըստ տնտեսական գործունեության տեսակների¹**

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ² , մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն դրամ	2003թ. հունվար-մայիսին, արտադրանքի (աշխատանքնե- րի, ծառայությունների) ֆիզի- կական ծավալի ինդեքսը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ (համադրելի գներով), %
Ամբողջ արդյունաբերությունը	154850.4	155913.9	118.2
<i>այդ բվում՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	42477.2	42477.2	108.5
<i>որից՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	39846.3	39846.3	109.8
<i>որից՝</i>			
էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	36721.5	36721.5	111.2
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	3124.8	3124.8	95.8
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	2630.9	2630.9	92.0
հանքագործական արդյունաբերություն	16943.5	11976.8	115.1
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	16284.1	11316.8	115.2
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	659.4	660.0	113.9
մշակող արդյունաբերություն	95429.7	101459.9	121.7
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	50372.2	51984.4	107.9
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	4838.0	4361.0	142.8
մանածագործական արտադրություն	680.5	645.9	122.5
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	587.3	482.3	90.5
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	77.0	59.5	46.0
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	511.6	528.9	121.7
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	1796.2	1822.0	116.1
քիմիական արդյունաբերություն	1600.3	1483.5	132.9
ռետինե և պլաստմասսայե արտադ- րատեսակների արտադրություն	402.8	368.3	201.6
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	3892.7	3547.2	136.7
մետաղագործական արդյունաբերություն	15125.4	21451.7	118.9
պատրաստի մետաղե արտադրատե- սակների արտադրություն	1242.8	975.2	155.7
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	1815.5	1752.0	114.5
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	8718.8	8200.9	134.4
գործունեության այլ տեսակներ	3768.6	3797.1	162.8


¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն գետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված և ակցիզային հարկերի:


Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2003թ. հունվար-մայիսին




Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում



Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




Հանքագործական արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ուսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

Մշակող արդյունաբերություն



- մետաղե հանքաքարերի արդյունահանում
- հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր

2003թ. հունվար-մայիսին արտադրված (հաշվառվող) 103 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 57-ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2002թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի 53-ից 30-ի և սպառողական ապրանքների՝ 50-ից 27-ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները¹

(մլն դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-մայիսին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2003թ.	2002թ. ²	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	61780.8	55166.4	112.0
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	35556.3	33551.2	106.0
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	12312.4	11512.2	107.0
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	13912.1	10103.0	137.7
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության ³	3171.5	3161.3	100.3
մշակութային և տնտեսական նշանակության	10740.6	6941.7	154.7

Ընդհանուր առմամբ, 2003թ. հունվար-մայիսին հանրապետությունում թողարկվել է 2392.8 մլն.կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2002թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 99.0%-ը: Ընդ որում, ՋԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 60.2 %-ով, ՋԷԿ-երում՝ 42.2 % -ով, իսկ ՋԱԷԿ-ում նվազել է 52.5 % -ով:

2003թ.հունվար-մայիսին ՋԱԷԿ-ը թողարկել է 578.7 մլն.կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 24.2 %-ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 987.8 մլն. կվտ ժամ և 41.3%-ը, ՋԷԿ-երը՝ 826.3մլն. կվտ ժամ և 34.5%-ը: 2003թ. հունվար-մայիսին հանրապետությունում թողարկվել է 220.4 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2002թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 150.5 %:

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները⁴

	2003 թ. հունվար-մայիս	2002 թ. հունվար-մայիս	2003թ. հունվար-մայիսը 2002 թ. հունվար-մայիսի նկատմամբ, %
Միս ⁵ , տոննա	13516	12258	110.3
Երչիկեղեն, տոննա	484.9	509.4	95.2
Պանիր ⁵ , տոննա	1808	1792	100.9
Պաղպաղակ, տոննա	363.8	369.5	98.5
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ⁵ , տոննա	75119	72434	103.7
Պահածո, հազ. պայմ. բանկա	30.0	651.9	4.6
Ալյուր, տոննա	58760	44602	131.7
Չավարեղեն, տոննա	8.1	9.0	90.0
Հաց և հացամթերք, տոննա	122648	122890	99.8
Հրուշակեղեն, տոննա	1500.7	986.2	152.2
Մակարոնեղեն, տոննա	458.0	383.3	119.5
Բուսական յուղ, տոննա	795.8	1154.1	69.0
Օղի և օղու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	3761.0	2967.2	126.8
Կոնյակ, հազ. լիտր	2444.5	2297.1	106.4

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

² 2002թ. սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2003թ. գներով:

³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

⁴ Այստեղ և հետախու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն գետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ժամկագիր՝ 1210-202):

⁵ Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

	2003 թ. հունվար-մայիս	2002 թ. հունվար-մայիս	2003թ. հունվար-մայիսը 2002 թ. հունվար-մայիսի նկատմամբ, %
Խաղողի գինի, հազ. լիտր	752.6	690.3	109.0
Շամպայն գինի, հազ.լիտր	176.7	129.0	137.0
Գարեջուր, հազ. լիտր	2000.9	2000.2	100.0
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	9171.9	7993.3	114.7
Բնական հյութեր, հազ.լիտր	1596.6	619.4	2.6անգամ
Հանքային ջրեր, հազ. 0,5 և շիշ	16560.4	13508.5	122.6
Աղ, տոննա	10944.3	9725.2	112.5
Սիգարետներ, մլն.հատ	1023.2	793.8	128.9
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	1038.3	851.5	121.9

Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2003 թ. հունվար-մայիս	2002 թ. հունվար-մայիս	2003թ. հունվար-մայիսը 2002 թ. հունվար-մայիսի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	104.3	172.1	60.6
Բրդյա գործվածքներ, հազ. մ ²	-	3.4	-
Գորգեր և գորգեղեն, մ ²	7059	7580	93.1
Գուլպեղեն, հազ. գուլգ	99.0	197.5	50.1
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	1208.0	750.4	161.0
Կարի արտադրանք ¹ , մլն. դրամ	2481.2	2842.9	87.3

2003թ. հունվար-մայիսին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից պլաստմասսայից իրերի արտադրությունը 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 57.8%-ով, լվացող և մաքրող միջոցներինը՝ 27.5%-ով,, քիմիկա-դեղագործական արտադրանքինը՝ 26.5%-ով, լաքաներկանյութերինը՝ 16.7%-ով:

Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2003 թ. հունվար-մայիս	2002 թ. հունվար-մայիս	2003թ. հունվար-մայիսը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	8111	6973	116.3
Ապրանքային բետոն, մ ³	14784	4512	3.3անգամ
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	16116	18249	88.3
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	86741	71253	121.7
Կիր, տոննա	-	2432	-
Ցեմենտ, հազ. տոննա	121.4	93.4	130.0
Գաջ, տոննա	15520	7672	2անգամ
Կանոնավոր կտրվածքի տուֆ, մ ³	13227	19988	66.2
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	34597	26943	128.4
Այլումինե և մետաղապլաստիկ իրեր, մ ²	12050	3542	3.4անգամ

Մետաղագործական արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ այլումինե գլանվածքի արտադրությունն ավելացել է 14.5 անգամ, այլումինե փայլաթիթեղինը՝ 3.3 անգամ, պղնձե խտանյութում պղնձինը՝ 13.5%-ով, կոմվերտորային (սև) պղնձինը՝ 0.5 %-ով:

Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի

¹ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2003 թ. հունվար- մայիս	2002 թ. հունվար- մայիս	2003թ. հունվար-մայիսը 2002 թ. հունվար-մայիսի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	118	120	98.3
Ռելեներ, հազ. հատ	102.1	159.9	63.9
Ուժային ճկուն կաբելներ, կմ	0.6	2.3	26.1
Տեղակայման հաղորդալարեր, կմ	23.4	445.4	5.3
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	3597	4299.8	83.7
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	695	942	73.8
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	135	41	3.3անգամ
0.5-100 կվտ հզորության փ/հ գեներատորներ, հատ	12	50	24.0
Ուժային տրանսֆորմատորներ, հատ	18	6	3անգամ
Պոմպեր, հատ	825	166	5անգամ
Ջրային հաշվիչներ, հատ	127780	1811	70.6անգամ
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	24	-	-